

## ԳՐՈՂԻ ՔԱՂԱՔԱՑԻՌԵՎՈՒՆԸ

Գրականության պատմության մեջ կան այնպիսի անուններ, ովքեր ուրիշների պեղած արծաթից իրենց պատկերով դրամ են կտրում և գրական շուկայում այդպիսով, ինչպես մեր սփյուռքահայերն են ասում, շահաբեր գործ տեսնում։ Երբեմն նույնիսկ վերածուլման հարկ չի լինում՝ ուրիշի պատկերով դրամը շրջանառություն է անում մեր նորօրյա հեղինակի համար։ Սա՝ եղած արժեքների այս վերարձարծումը, խոցելի չէ, բայց ահա ցանկալի դժվարագույնն այն է, եթե դու ինքո՞ւ ես քո արծաթի և պեղողը, և դրվագողը, այլ խոսքով՝ շատ ավելի պատվաբեր է կենդանի, պղտոր, հակասական, դժվար կյանքը գեղարվեստ դարձնելը։

Գրական իր երկար ճանապարհին Անահիտ Սահինյանն անընդհատ ինքն է եղել իր հանքավայրը վմտորողը, հանույթը պեղողը, մետաղը կրանողը՝ նույնիսկ այն դժվար դեպքերում, երբ գործի պատճականության հանգանանքը նրան կանգնեցրել է կերպարահրավիճակային հար և ննան պայմանների առաջ և նախորդներին երկրորդելը թվացել է անխուսափելի։

Երկրորդելը թվացել է անխուսափելի, այնինչ Սահինյանի վեպերը մեկ և նույն խնդրի շուրջ սանձակոծված գրական հեղեղի մեջ սկզբնաղբյուրի տպավորություն են թողնում, նրա գործը՝ վավերագրություն, նրա էջերը իրենց տեղամասից ու ժամանակից արված թանկ հաղորդումներ են թվում, և հաջորդներին համար այլևս դժվար է այդ դեպքերին ու ժամանակին դառնալ Սահինյանին շրջանցելով։

Սա հեշտ բացատրվող ու դժվար դավանվող սկզբունք է. կյանքը նրան թույլ չի տվել գրքային լինել։ Սա, վերջին հաշվով, այն է, ինչը կոչում ենք գրողի քաղաքացիություն։ Սահինյանի համար, ոչ, գրականությունը խաղ չէ, գրողների կառուցմանը տրամադրված կյանքի որոշակի մարզ է, որ պահանջում է նույնքան արյուն ու քրտինք, ազնվություն ու պատասխանատվություն, ինչքան շինարարի ու գյուղացու աշխատանքը։

Գրական գործի նրա քաղաքացիական այս ընթանումով միայն կարելի է բացատրել նրա վեպերի անսպասելի դիմացկունությունը։ Անսպասելի՝ քանի որ չեւաքարի պես անհարթ նրա գիրը, թվում է, չի ենթարկվել հեղինակի ձեռքին, ոչ այնքան բարեկազմ նրա կառուցմերը առաջին պահ անկայուն են թվում։ Բայց նույնքան անհարթ, նույնքան իրասածի նրա կերպարների համար դա ճշգրիտ գիր է, և այդ անբարեկազմությունը կյանքի հորձանքի առաջ նախնական հղացումների նահանջի փաստ է. հղացման թվում է պինդ, թվում է տրամաբանված եղուագժերը

Ելեւջում, ճկվում, բեկվում, իրենց հիմքերից ելնում են՝ կառույցի մեջ առնելու կյանքի նաև այս թեկորը, այս անսպասելիությունը, այս դրսնորումը: Նրա գործերն, այո՛, հավաքված են ոչ թե կյանքի հեռավոր, արձագանքային, զտված, բույլ ձայներից ու վերացարկված, խորհրդանշից միտող կյանքանման աղոտ պատկերներից, այլ աղմկոտ ու ծանր բուն կյանքն են, և այդուհանդերձ այդ պիտոր հեղեղի վրա թրթում է ազնվական մի այնպիսի թախիծ, որ միայն պոեզիային է հատուկ: Մյուս կողմից՝ լեզվակառուցվածքային այս «անխնանությունը» բաց կռիվ է պարապ հարթագորության ու կոկված սնամեջության դեմ:

Անահիտ Սահինյանը հավատում է գրականությանը: Գրականության մեջ կենդանի կյանքին այդ երկրպագության հասնող վստահությունը, գրական մյուս հարցերը կենդանի կյանքին ստորադրելու այդ ինքնամոռաց համոզվածությունը ամենից առաջ գրականության նկատմամբ հավատի արդյունք է. Սահինյանը հավատում է կյանքի վրա գրականության ազդեցությանը: Սահինյանն իր գրականությունն օժտում է այնպիսի լիցքով, որի առկայությանը գրական գործն իսկապես ձեռք է բերում ստեղծիչ դեր: Այդ հավատը մեզ այսօր ավելի քան հարկավոր է: